



ԵՐԿԱՆԴ ԵԱՆԱԶԻՉ

ԳԱՄԱՌ-ԳԱԹԻՊԱՅԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻԺ



աֆայել Պատկանյանի մեծ արխիվն նրա մահից հետո, անցել էր նրա մոտ բարեկամ Գրիգոր Զալիուշյանի ձեռքը, որ մեզ էր հանձնել ջոկելու և կարգի բերելու գործը: Այն ժամանակներից (1892 թ.) այս նամակի բնագիրը մեզ մոտ էր մնացել, և մենք այստեղ նրանում արգեն, երբ կազմում էինք նրա «Դիվանը», մոռնալուց հետո այն դիվանիս մեջ, վերադարձրել էինք բնագիրը իր իսկական տիրոջը:

Ի նկատի առնելով այն, որ «Դիվանը» 1937 թ. մինչև օրս դեռ անտիպ է մնում,

իրավունք ենք համարում հանել այս հետաքրքրական նամակը «Դիվանը»-ից և հրատարակության տալ:

Նամակի բնագիրը գրված լինելով մատիտով գիշերվա ժամը 12-ին, շտապ, Անվո ավերակ Կաթողիկե եկեղեցու մեջ, լապտերի նվազ լույսի տակ, դժվարությամբ է կարդացվում, նամանավանդ, որ լեզուն էլ, Պատկանյանին հատուկ սովորական խառն խոսակցության լեզուն է: Տպագրում ենք անփոփոխ և կարծում ենք, որ շահեկան ու հետաքրքրական պետք է լինի ընթերցողներին համար:

Հոկտեմբերի 1, 1879, Անի, Կաթողիկեի ավերակի մեջ, ժամը 12-ը գիշերվա.

ԱՄՆԵԱՍԻՐԵԼԻ ՀԱՅՐ ԻՄ

Ժամը երեկոյան 6-ն էր, որ հասա Անի: Իջնականցի լուսանկարիչ Քյուրքճյանի վրանում, որ հարած էր ավերակ-մայրաքաղաքի քայքայված Կաթողիկե ասված եկեղեցու աջակողմյան խորանում (մատուռ): Այնքան աղքատություն 4 ժամու ճանապարհ է կառքով և համարվում է 30—40 վերստ, ճիշտ չգիտեմ: Նկանք Անի հյուսիսային կողմից, անցանք դրեթն բոլոր ավերակների մեջից, իսկ իմ կեցած եկեղեցին թափ ծայրումն է Ախուրյան ձորին, մոտիկ միջնաբերդից և իմ կարծիքով, Հայոց մեծամեծաց խորհրդարանից, իսկ այլոց կարծիքով, իբր թե Տաճկաց մզկիթից: Ինչ և իցէ, լույսը նվազելու վրա էր, ամեն բան երևում էր կիսաձևով, մառախլապատ: Մինչև շալ կպատրաստեին, մինչև նեղ վրանի մեջ ինձ համար օթեանելու տեղ կպատրաստեին, ժամը ութը—ինն եղավ: Հյուրասեր Քյուրքճյանը, կարծելով թե ես ճամբե հոգնած կլինեմ, համոզեց շուտ մտնեմ անկողին, ես այդպես էլ արի:

Հետոց եկող պարոն խաչատուրը շատ խրիւռացոնեց. ես օրվա ծանր տպավորություններն պաշարված, քուես աչքես կորուցի, մնացի անքուն ուղիղ մինչև գիշերվա ժամը 11, պտուտ, պտուտ գալով անկողնիս մեջ, ինչպես որ սովորություն է ամեն մտատանջ մարդու: Փչեց հյուսիսի քամին, բայց ինչ քամի, նրան պատահողը միայն գիտե, խոսքով շատ դժվար է մեկնելը,— քամի՛, որ կանգնած մարդուն ոչ միայն գետին է գլորում, այլ առնում տանում է ու ձորն է ձգում, քամի՛, որ վրաններու շվանները կտրտում է և բարձրացնում է երկինք, քամի՛, որ արգիլել է արգավանդահող Շիրակին ունենալու անտառներ ու պարտեզներ (Անիի շուրջը, որքան հեռագիտակն էր հասնում, ոչ մի թուփ չէի նկատում): Անդուն, ամպատուհան Կաթողիկեն իրով եկած, և քանի քանի տեղի ճաքճաքած պատերեն քամին ներս էր մտնում ու գիշերային սոսիսալի ժամերդու:

Յյուն էր անում, արձագանք տալիս տաճարի մեջ, մազս տիպ տիպ էր կանգնում, գլուխս ու բոլոր մարմինս փուշ փուշ էր լինում, թեև ոչ մահու երկյուզեն։ Դժվար է երևակայելը, բայց տեսնողը գիտե, որ ավերակը մարդուս վրա քսումնելի ազդեցություն է կատարում գիշերային խորհրդավոր ժամերում, որ մարդ, որ հասակին կուզի լինի, ինչպես դաստիարակված կուզի լինի, իսկույն կենդանացնում է յուր մտքի մեջ այսերուն, շար ոգիներուն, թաղած մեռելներուն ու տունի տներուն։ Անբնական

բան է, որ մարդ, որ հազար դժվարություններ չի ունի մի աղբատիկ ու խարխուլ խրճիթ, հանկարծ տեսնե նա ահագին քաղաք, մեջը լցրած հսկայածե տաճարներով, հոյակապ պալատներով և բլուրք բլուրոց մեծագին շենքերով, չի՞ սարսափի. ինչո՞ւ. թողին ու փախան մարդիկ այսպիսի հարստությունից, մի՞թե մարդըս հեշտ է բաժանվում յուր պապերու սրբազան տեղերեն, յուր ծնած տեղեն, յուր զավակների օր ու արև տեսած տեղեն։ Այսօր լքած, թողած քաղաքը, տունը ու տաճարը ամենի վրա, գիշերվա ժամին ահ ու սարսափ է բերում, բայց դարձյալ ասում եմ, մահվան երկյուղը չէր

ինձ պաշարողը։ Տաճարի ահագին բարձրությունից հանկարծ գոռաց բուն յուր տիրալի ու շարագուշակ ձայնով, որ խիստ հարմար էր քամիի ոռնալուն և տեղի մեռելանման լուսվյալը և ահա, նույն հեռավոր դիտակից, որ կարծվում է տաճկի միմարե, պատասխանեց նրան ուրիշ բու... Լուսվյուն, բայց այնպիսի լուսվյուն, որից բուպեի մեջ սպիտակում է մարդու գլխու մազերը... Հանկարծ մի փոքրիկ քար վայր ընկավ նրա արձագանքը 5—6 անգամ կրկնվեցավ տաճարի մեջ. լուսվյուն, ահա հաշեց հեռույումը վայրի աղվեսը, բայց

այնպես ողբալի, իբր թե վհուկներու մագիլներեն օգնություն է խնդրում։ Քամին հանկարծ դադարեց փչելու, ավստ՝ս և իզո՞ւր, գոնե գիտես, որ քամին քամի է, մի սովորական երևույթ է, բայց նրա լուսվյուն ժամանակ ավերակի կողմից, ամայի ձորերի մեջեն, քաղաքի վրատակների տակերեն սկսան լսվել գիշերային անորոշ ձայներ, այն ձայները, որ իրական կյանքի մեջ բնություն մեջ, օր ցերեկով երբեք չեն լսվում. այն ձայները, որն երբեք մարդիկ կարողացած չեն իմանալ, թե որի՞ ձայնն են, և որի՞ ժողովուրդը կոչել է



ԳԱՄՍՈ—ԲԱԹՒՊԱ


գիշերվա արհամարի։ Ընկերս խոխոտում է, հյուրասեր տանուտերս նույնպես անուշ բուն է վայելում, ես մենակ բուն չեմ լինում. սոսկալի ահագին պատերը թեև աղետ լուսավորված են յապտերի լուսեն, բայց ակնհայտի երևում են ինձ, աչքս փակում եմ, կոպրիս մեջեն տեսնում եմ, ավելի տեսնում եմ քան թե աչքս բաց ժամանակը... Տեսնում եմ անձնավորած ամեն հայկական մոլությունը, որը կործանեցին ապառաժաշեն Անիի Անիի շուրի ոչ փայտ, ոչ աղյուս, ոչ գառ, Անին շինած է լոկ քարե, շինած է ապառաժյա վիմե, ի՞նչպես քանդվեցավ, զարմանալի՝ բան։

Անհնար է այսպիսի հրաշակերտ շինելու հասարակ մահկանաց փի ձեռքով, Անիի շինողը հսկաներ և դուրեգազներ են եղել, բայց և քանդողք եղել են ոչ պակաս հսկաներ շարություն և մոլություն կողմանե։ Հայոց շոր ու ցամաք պատմությունը ամենևին արտահայտիչ չի հայոց կյանքին ու մահուն, ես այս սոսկալի ժամուն հոգով և երևակայությամբ ըմբռնեցի այն ամեն գաղտնի, որ վարդապետների գրիչը երբեք հասկացնել չէր ինձ։ Նա հասկացա շատ բան. այս քարերեն ես ավել բան հասկացա, քան թե մեր բազմահատոր գրքերեն։ Այս լուպիս Անիի մեջ կա ? հոգի հայը— ես, ուղեկիցս,

Քյուրթջյանը, նրա երկու ծառայք և երկու ծառայք (թեև բացի ինձմի, ամենքը քնած են), բայց մեր շորս կողմը... ձորերու ու հովիտներու մեջ կան ավելի, քան թե հազար արյունարբու քյուրդեր, Անիի օր ու պիշեր ավերողները... Մահին ամեն լուպն սպասում եմ, չեմ վախենում, Աստված հավատացեք, բարձիս տակը ունիմ վեց փողանի ատրճանակ, կյանքս արժան չեմ ծախիլ կեղտոտ քյուրդերին, բայց 7 զավակս, բայց անտեր կնիկս, որից ահա 3 ամիս է լուր չունիմ, նոքա, նոքա, խեղճերը

Ձախերը շատացան, քամին ու բուերը ունում են, կարծես թե Թուրքիլը, Արփ-Արսլանը, Չարմաղանը ու Մասիսի գետնաշարժը նորից պիտի ցույց տան խեղճ Անիին իրանց կատաղի բնավորությունը։ Ողջ լեռուք և աղոթիցեք Ձեր Ռափայելի ողջություն համար։

Սիրելի հայր իմ, այս նամակը կարդացեք և անհապաղ ինձ վերադարձուցեք. սա պիտի մտնե իմ ճանապարհորդության մեջ, իբր Անիի գիշերվա կատարած ծանր տպավորությունը։ Որքան և փորրուկ լինի եր-



Անի. 'Կարողիկե եկեղեցին

պիտի մնան անպատսպար որբեր, իսկ ինձ համար Անիի մեջ արյուն վոթելը անթառամ պսակ է... Օրհնեցե՛ք ձեր որդուն, որ ի սեր ազգին յուր կյանքը վտանդի տակ ձգել գիտե... Ի սեր ազգին, ասում եմ. ես գիտեմ, որ իմ ճանապարհորդելու Հայաստանի մեջ անօգուտ չի պիտի մնա հայերի համար։ Ժամը 2-ն է գիշերվա, քունս չի տանում։

բեմն մարդս, բայց նրան միշտ թանգ է ամեն մի իսկական զգացմունք, թեկուզ լինի նա դուրսադնական կամ երեսխակա՞ն. այսպիսի րոպեններ շատ հաղիվ են պատահում իրական կյանքի մեջ, և եթե պատահում են, նոքա թանգ և անմոռանալի են, և նոցա հիշատակը, փրկե սրբոց մասունք, նվիրական է մեզ համար։

Մանորություն

Թափ ծայրում— Ամենածայրում։

Այս, այսեր— Սատանա, սատանաներ։

Տունի տերեր — Տների մեջ ապրող ոգիներ։

Նամակիս մեջ հիշված Խաչատուրի ով լինելը մեզ հայտնի չէ, իսկ Քյուրթջյանը ժամանակի հայտնի հայ լուսանկարիչ է եղել, որ ամիսներով ապրել է Անիում և վարպետորեն լուսահանել բոլոր ավերակները

ու կազմել մի ընտիր հավաքածու ստերիսուկուպի համար։

Մեզ թվում է, որ մեր շնորհալի բանաստեղծը սխալվում է, երբ Անվո դաշտի բուսականություն չունենալը վերագրում է այդտեղ փշող քամիների ազդեցության։ Անվո դաշտն անջրդի է, նման մեր երկրի շատ տեղ եղած անջրդի առապարներին, որոնք, սակայն, ջուր ստանալուն պես, հա-

մակ պարտեզ ու այգի են դառնում, ինչպես
ցույց են տվել Սովետական Հայաստանի
հաջող փորձերը:

Պատկանյանի խոսքերից երևում է, որ նա
ցանկացել է ճանապարհորդել Հայաստա-
նում, բայց որքան մենք գիտենք, չի կատա-
րել իր ցանկությունը, որովհետև Մակար
կաթողիկոսը, ի նկատի առնելով ժամանակի
անհարմարությունը քաղաքական տեսակե-
տից, խորհուրդ չի տվել:

Որ Անին քարուքանդ է եղել երկրաշար-
ժից և դրա հետևանքով վերջնականապես
դատարկվել բնակչությունից, այդ փաստ է
և ոչ ոք չի հերքում, բայց որ նա քանդվել
է Մասիս շարժից, մենք այդ առաջին ան-
գամ իմանում ենք Պատկանյանի այս նա-
մակից: Ո՛րքան ճիշտ է այդ: Իսկ քաղաքի
կործանումն քաղաքական տեսակետից, որի
մասին ակնարկում է Պատկանյանը իր «Տես-
նում եմ անձնավորած ամեն հայկական
մոլորությունը, որը կործանեցին ապառաժաշեն
Անին», խոսքերով, բոլորովին ճիշտ է: Այդ
հետևանք է եղել բյուզանդական կայսրների
Հայաստանին տիրելու համար գործադրած
նեղ գաղաքականություն, որին նպաստել
են քաղաքականապես անբարոյականացած
իշխաններն ի դեմս դավաճան «Վեստ
Սարգսի և մյուսների ու ժամանակի, ոչ բա-
րով «Գեոտարած» կոչված Պետրոս Ա. կաթո-
ղիկոսի (1019—1028), որոնք անձնական
շահերից դրդված ծախել են իրենց հայրենի-
քը և ազգի դավաճանների սև անունը (տես
էջմիածնի միաբան Հուսիկ վարդապետ Մով-
սիսյանի «Հայաստանիայց Առաքելական Ս.
եկեղեցու պատմություն», դուրսեր Թ—Ժ):

Ռաֆայել Պատկանյանի իր այդ Անվտ ա-
վերակներին տեղն ու տեղը ծանոթանալու
հանգամանքը կապված է եղել նրա մտա-
դրություն հետ՝ մի բան գրելու քաղաքի կոր-
ծանման մասին, որ նա հետագայում և ի-
րագործել է՝ գրելով իր պատմական «Անույ

առումն» խորագրով թատերական երկը,
բայց մեզ անհայտ պատճառով կիսավատար
է թողել:

Բանաստեղծի այդ կիսատ երկը, որ բաղ-
կացած է մի նախերգանքից և երկու արար-
վածից, մենք տպագրել ենք մեր ծանոթագր-
ություններ «Առումայ»-ի 1901 թ. երկրորդ
գրքում: Ավելորդ չենք համարում այստեղ
ասել և այն, որ Պատկանյանն այդ թատե-
րագրությունը գրել է Սուեդուկյանի հորեղ-
յանի առթիվ, նա ցանկացել է այդ ներկա-
յացնել նոր- նախիջևանում տեղի «Թատե-
րասիրաց բնկերություն» անդամների մի-
ջոցով, նույնիսկ հոբելյանի օրը:

Դ. Խաչկունցն իր «Հայոց Կրօնական բա-
նաստեղծությունը» խորագրով հոդվածում
խոսելով վերոհիշյալ Պետրոս Գեոտարածի
գրած շարականների մասին՝ ասում է.
«... Գեոտարած Հայրապետն, որ ուներ ցե-
ղական ճոխություն՝ հինգ հարյուր գյուղ
ու առատ գանձեր, որ իբրև հոգևոր տեր ոչ
միայն հինգ հարյուր գավառապետուհ եպիս-
կոպոսներ ուներ ձեռքի տակ, այլև ամբողջ
հայոց կապողն ու արձակողն էր, կամ, ըստ
Գրիգոր Մազիստրոսի, իբրև «սուրբ հայ-
բապետ բացող մեզ դրամն արքայութեան»,
էրբ ամեն բան կորսնցուց, իրավունք ու-
ներ երկարորեն մտածելով իմաստունին
նման բացականչելու՝ «Ունայնություն ու-
նայնություն»: Այդ միտքը իր ձևով իր
աստիճանի ու կոչման համեմատ ամփոփ-
ված է այնպիսի հոգևոր երգի մեջ, որ ա-
մեն ժամանակ ու անդադար հնչվում է հայ
եկեղեցու մեջ իբր խրատ ամենքին. «Ոսկի
կղեալս անպիտանացալ, գեղեցկայարմար
չինուածոյս քակտումն. իմաստունս յիմա-
րեցալ ի բարեաց մեղաց, յոր ընկղմեցալ,
և այժմ աղաչեմ Ստեղծողդ ամենից, բնկա՛լ
և հանգո՛ղ հրաժարեալ հոգիս յեթնաստե-
ղեան լուսեղէն խորանս» և այլն: (Տես
«Առումայ» գիրք Բ. էջ՝ 305—368):

